ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.08.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/112

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Նարսան» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ս. Հարությունյանի (իրավաբանական անձի պետական գրանցման վկայական 03Ա060504)

Ներկայացուցիչ՝

Ս. Հարությունյանի (լիազորագիր, տրված՝ 09.07.2019թ.)

ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ՝

Գ. Նադիրյանի (լիազորագիր, տրված՝ 28.06.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.07.2019թ. թիվ 26/26-1/11013-2019 գրությամբ «Նարսան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 21.06.2019թ. թիվ ՊՆ/02/951-2019 գրության հիման վրա, 02.07.2019թ. թիվ 26/26-1/11013-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Նարսան» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Նարսան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Նարսան» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար շինանյութի և տնտեսական ապրանքների մատակարարման նպատակով կազմակերպվել է թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնանշման հարցում (հետայսու նաև՝ Ընթացակարգ): «Նարսան» ՍՊԸ-ն մասնակցել է Պատվիրատուի կողմից հայտարարված Ընթացակարգին, որի 5, 7, 8 չափաբաժինների մասով (ընդամենը 16 111 000 ՀՀ դրամ) ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից N9 արձանագրությամբ:

«Նարսան» ՍՊԸ-ի կողմից մասնագիտական փորձառության առկայությունը հավաստելու նպատակով Պատվիրատուին է ներակայացվել 01.06.2018 թվականին Պատվիրատուի հետ նախկինում կնքված և պատշաճ կատարված թիվ «ԳՀԱՊՁԲ-10/19-10» ծածկագրով գնման պայմանագրի (հետայսու նաև՝ Պայմանագիր) հաշիվ-ապրանքագրերը (Ա-6887150986, Ա-7647921269, Ա-2834144099, Ա-6293182722, Ա-6329129132, Ա-2268280424) և պայմանագիրը սահմանված ժամկետում կատարելը հավաստող հանձնման-ընդունման արձանագրություններ (N01, N02, N03, N04, N05, N06): Ուղարկված փաստաթղթերից մեկ հաշիվ-ապրանքագիր (Ա-2268280424) և N 5 արձանագրությունն ապրանքն ընդունողի կողմից ստորագրված և հաստատված չեն եղել՝ համաձայն թիվ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի N 11 արձանագրության

Միակողմանի ստորագրված հաշիվ–ապրանքագիրը (Ա-2268280424) և N 5 արձանագրությունը նույն ապրանքի մատակարարման համար դուրս գրված հաշիվ–ապրանքագիրն ու արձանագրությունն են (ընդամենը 9 459 267.53 ՀՀ դրամ), որի երկկողմանի հաստատված և ստորագրված տարբերակների բնօրինակներն առկա են Պատվիրատուի մոտ: Ընկերությունը նշել է, որ «Նարսան» ՍՊԸ-ի և Պատվիրատուի միջև 01.06.2018 թվականին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-10/19-10» պայմանագիրը (ընդամենը 31 495 000 ՀՀ դրամ) կատարվել է պատշաճ:

Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման (հետայսու նաև՝ Կարգ) 61-րդ կետի 2)-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը (մասնագիտական փորձառություն) հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած, պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Վերոնշյալ իրավանորմի վերլուծությունից հետևում է, որ գնման ընթացակարգի մասնակցի մասնագիտական փորձառության հիմնավորումը հավաստվում է նախկինում կնքված պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման փաստով և տվյալ փաստի առկայության վերաբերյալ եզրահանգման համար բավարար հիմք է հանդիսանում նշված պայմանագիրը սահմանված ժամկետում կատարելու մասին կողմերի միջև հաստատված հաձնման-ընդունման արձանագրությունը (ակտը):

Կարգի 61-րդ կետի 2)-րդ ենթակետով սահմանված կարգավորումները նպատակ են հետապնդում հավաստելու գնման ընթացակարգի մասնակցի բարեխղճությունը քաղաքացիաիրավական հարաբերություններում, և նշված փաստը հաստատելու կամ հերքելու նպատակով Որոշման 67-րդ կետով Պատվիրատուին ընձեռված է բավականին

լայն գործիքակազմ՝ մասնակիցների կողմից ներկայացված տվյալների հավաստիությունը ստուգելու նպատակով, մասնավորապես ՝ Գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Սույն բողոքի փաստերի համաձայն՝ «Նարսան» ՍՊԸ–ի կողմից որպես մասնագիտական փորձառության չափանիշի առկայության հավաստում ներկայացվել է 01.06.2018 թվականին կնքված ԳՀԱՊՁԲ-10/19-10 պայմանագիրը, որի շրջանակներում գնորդի կողմում մասնակցել է նույն պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը:

Հատկանշական է այն հանգամանքը, որ Պատվիրատուի տիրապետման ներքո առկա է «Նարսան» ՍՊԸ-ի կողմից իր մասնագիտական փորձառությունը հավաստող փաստաթղթերի փաթեթը և Պատվիրատուի կողմից բավարար շրջահայացություն ցուցաբերվելու դեպքում վերջինս կարող էր հստակեցնել «Նարսան» ՍՊԸ–ի մոտ մասնագիտական փորձառության մասին որակավորման չափանիշի առկայության փաստը, ինչը չի կատարվել Կարգով սահմանված կարգավորումների զուտ տեխնիկական մեկնաբանության արդյունքում: Միևնույն ժամանակ, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի N 11 արձանագրությամբ հավաստվել է, որ «Նարսան» ՍՊԸ–ի մոտ առկա է եղել Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև երկկողմանի հաստատված հաշիվ-ապրանքագիրը և N5 արձանագրությունը, ինչը, սակայն, չի քննարկվել գնահատող հանձնաժողովի կողմից՝ սահմանված ժամկետում ներկայացված չլինելու պատճառով: Ընկերությունը նշել է, որ Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև երկկողմանի հաստատված հաշիվ–

ապրանքագիրը և N5 արձանագրությունը ուղարկվել է Պատվիրատուին 13.06.2019թ., իսկ N 11 արձանագրությունը կազմվել է 14.06.19թ.:

Պատվիրատուի և «Նարսան» ՍՊԸ-ի միջև 01.06.2018 թվականին կնքված «ԳՀԱՊՁԲ-10/19-10» պայմանագրի 5.4. կետով սահմանված է, որ եթե հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված: Ուստի, նշված կարգավորումը նույնպես հիմք է տալիս եզրակացնելու, որ Պատվիրատուի և «Նարսան» ՍՊԸ–ի միջև 01.06.2018 թվականին կնքված «ԳՀԱՊՁԲ-10/19-10» պայմանագիրը «Նարսան» ՍՊԸ կողմից կատարված է պատշաճ, ինչի կապակցությամբ էլ Պատվիրատուն մինչ օրս «Նարսան» ՍՊ ընկերությանը չի ներկայացրել որևէ պահանջ:

Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

«Նարսան» ՍՊԸ-ի կողմից թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում մասնագիտական փորձառության հիմնավորման նպատակով ներկայացված Պայամանագրի հաշիվ-ապրանքագրերի և Պայմանագիրը սահմանված ժամկետում կատարելը հավաստող ընդունման-հանձնման արձանագրությունների ուսումնասիրությունից պարզվում է, որ, նույնիսկ փաթեթում ընդգրկված և միակողմանի ստորագրված հաշիվ-ապրանքագիրը (Ա-2268280424), N5 արձանագրությունը չքննարկելու դեպքում, ներկայացված մնացած փաստաթղթերով հավաստվում է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգի շրջանակներում մասնակցի կողմից ներկայացված Պայմանագիրը համարվում է նմանատիպ, քանի որ Պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը պակաս չէ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Նարսան» ՍՊԸ–ի կողմից ներակայացված գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Վերոգրյալի հիման վրա Ընկերությունը փաստում է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Նարսան» ՍՊԸ-ի կողմից մասնագիտական փորձառության որակավորման չափանիշի առկայությունը հիմնավորելու նպատակով ներկայացված փաստթղթերով ապահովվում է Կարգի 61-րդ կետով հետապնդվող նպատակը՝ պարտավորությունները մասնակցի կողմից պատշաճ կատարված լինելու և Պայմանագիրը նմանատիպ համարվելու փաստի հավաստումը:

Ընկերությունը նշել է նաև, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 5, 7, 8 չափաբաժինների մասով այլ կազմակերպությանը առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու դեպքում Պատվիրատուն պետք է վճարի 617 000 ՀՀ դրամ գումար ավելի շատ՝ նույն ապրանքների ձեռքբերման համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը, «Նարսան» ՍՊԸ-ն 24.06.2019թ. բողոք է ներկայացրել գնումների հետ կապված բողոքը քննող անձին: Բողոքի հիման վրա 03.07.2019թ. նիստ է տեղի ունեցել գնումների հետ կապված բողոքը քննող անձ Լ. Օհանյանի գլխավորությամբ:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Ընկերությունը խնդրել է «Նարսան» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում չներառել:

«Նարսան» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/112 ընթացակարգի շրջանակներում 09.07.2019թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 21.06.2019թ. թիվ ՊՆ/02/951-2019 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՊՆ կարիքների համար «Շինանյութի և տնտեսական ապրանքների» գնման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ էին ներկայացրել թվով 32 մասնակիցներ, այդ թվում՝ «Նարսան» ՍՊԸ-ն:

«Նարսան» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից 5-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Սահմանված կարգով վերոնշյալ մասնակցին համակարգի (armeps.am) միջոցով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փատաթղթերը ներկայացնելու վերաբերյալ: Գնահատող հանձնաժողովի առաջարկի հիման վրա Ընկերությունը սահմանված ժամկետում և կարգով ներկայացրել է ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3.1 կետով նախատեսված որակավորման փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում հանձնաժողովը պարզել է, որ «Նարսան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը 11.06.2019թ. կայացած նիստում որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել առկա անհամապատասխանությունները:

Ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են ծանուցմամբ պահանջված փաստաթղթերը, որի քննարկման ժամանակ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ներկայացված փաստաթղթերում նույնպես առկա են անհամապատասխանություններ: 13.06.2019թ. Ընկերության կողմից ուղարկվեցին շտկված տարբերակներ, որոնք հանձնաժողովի կողմից չքննարկվեցին, քանի որ վերը նշված փաստաթղթերը ներկայացված էին օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ

(մանրամասն տեղեկությունները ներառված են կից ներկայացվող հանձնաժողովի նիստերի արձանագրություններում), ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի պահանջները, որոշել է մերժել «Նարսան» ՍՊԸ-ի հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/112 ընթացակարգի շրջանակներում 09.07.2019թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/112 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/112 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Նարսան» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 9 արձանագրության համաձայն՝ «Նարսան» ՍՊԸ-ն Ընթացակարգի 5-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հանձնաժողովի 11.06.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 10 արձանագրության համաձայն՝ «Նարսան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում բացակայում են «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին Ընկերության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Ընկերությունը Կարգի 47-րդ կետի համաձայն ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.06.2019թ. նիստի թիվ 11 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է՝

«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին չհամապատասխանելու հիմքով:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 02.07.2019թ. թիվ 26/26-1/11013-2019 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 21.06.2019թ. թիվ ՊՆ/02/951-2019 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ

մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը

հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 61-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի

ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

3) ....

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Նարսան» ՍՊԸ-ն:

Ընկերության ներկայացրած գնային առարարկը Ընթացակարգի 5-րդ չափաբաժնի համար կազմել է 5 768 000 ՀՀ դրամ, 7-րդ չափաբաժնի համար՝ 4 496 000 ՀՀ դրամ, 8-րդ չափաբաժնի համար՝ 5 847 000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 9 արձանագրության համաձայն՝ «Նարսան» ՍՊԸ-ն Ընթացակարգի 5-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հանձնաժողովի 11.06.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 10 արձանագրության համաձայն՝ «Նարսան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված

փաստաթղթերում բացակայում են «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին Ընկերության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Ընկերությունը Կարգի 47-րդ կետի համաձայն ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.06.2019թ. նիստի թիվ 11 արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի առկայությունը հավաստելու համար ներկայացված 01.06.2018թ. կնքված «ԳՀԱՊՁԲ-10/19-10» ծածկագրով գնման պայմանագրի հաշիվ-ապրանքագիրը և պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող հանձնման-ընդունման N 5 արձանագրությունն ապրանքն ընդունողի կողմից ստորագրված և հավաստված չեն **(հաստատված տարբերակները Ընկերության կողմից ուղարկվել են, սակայն սահմանված ժամկետից հետո, որը հանձնաժողովի կողմից չի քննարկվել):**

Նույն արձանագրության համաձայն՝ «Նարսան» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Այսպիսով՝ Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ մասնագիտական փորձառության պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի

կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Այսպիսով՝ «Նարսան» ՍՊԸ-ի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար ներկայացվել է Ընկերության և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 01.06.2018թ. կնքված պետության կարիքների համար ապրանքի մատակարարման N «ԳՀԱՊՁԲ-10/19-10» պայմանագիրը, որի գինը կազմել է 31 495 000 ՀՀ դրամ: Ընկերությունը պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստելու համար ներկայացրել է պայմանագրի շրջանակներում կողմերի միջև կնքված N 01, N 02, N 03, N 04, N 05, N 06 հանձնման-ընդունման արձանագրությունները, որոնց համաձայն Ընկերության կողմից կատարված և պատվիրատուի կողմից ընդունված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ կազմել է համապատասխանաբար՝ 396 281 ՀՀ դրամ, 704 351 ՀՀդրամ, 4 166 400 ՀՀ դրամ, 4 577 760 ՀՀ դրամ, 1 967 240 ՀՀ դրամ, 793 600 ՀՀ դրամ, 9 459 268 ՀՀ դրամ, 9 430 098 ՀՀ դրամ: Ընկերությունը ներկայացրել է նաև պայմանագրի շրջանակներում դուրս գրված հաշիվ-ապրանքագրեր, որոնցով ամրագրված գումարը համապատասխանում է հանձնման-ընդունման արձանագրությունների և պայմանագրի գնին:

Միևնույն ժամանակ Ընկերության կողմից ներկայացված պայմանագրի N 05 հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա հիման վրա դուրս գրված Ա2268280424 հաշիվ-ապրանքագիրը հաստատված չեն եղել ապրանքն ընդունողի և հարկային հաշիվը ստացողի կողմից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը սահմանում է, որ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, բավարարում է «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ուսումնասիրելով «Նարսան» ՍՊԸ-ի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար ներկայացված պայմանագիրը և կից փաստաթղթերը, գտնում եմ, որ չնայած այն հանգամանքին, որ Ընկերության կողմից գնահատող հանձնաժողովին ներկայացված պամանագրի թիվ 05 արձանագրությունը և համապատասխան հաշիվ-ապրանքագիրը հաստատված չեն եղել ապրանքն ընդունողի և հաշիվ-ապրանքագիրը ստացողի կողմից, այնուամենայնիվ Ընկերության կողմից գնահատող հանձնաժողովին (իսկ սույն գործի շրջանակներում նաև՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին) սահմանված ժամկետից հետո նշված փաստաթղթերի պատշաճ հաստատված տարբերակները ներկայացնելու հանգամանքը հաշվի առնելով, ինչպես նաև հիմք ընդունելով նաև այն, որ վերոհիշյալ պայմանագիրը կնքված է եղել Ընթացակարգի պատվիրատու ՀՀ պաշտպանության նախարարության հետ և նշված արձանագրությունը և հաշիվ-ապրանքագիրն իրականում հաստատված են եղել ՀՀ

պաշտպանության նախարարության կողմից, և պայմանագիրը համարվել է պատշաճ կատարված, ինչպես նաև հրավերով սահմանված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին բավարարող, գտնում եմ, որ «Նարսան» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում և առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.07.2019թ. թիվ 26/26-1/11013-2019 գրությամբ «Նարսան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**